

կուտս, անցքէն անսցանք. ելլանկը ստամփսէն դուրս. սակայն ամենայն ինչ չէ լմնցած, և հետզհետէ յառաջելով դեռ ուրիշ շատ բան պիտոր տեսնանք :

Ի՞ն շարունակուի :

## ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Տես Հատ. Իշ. երես 357)

Տղայքը քահանային խօսքերուն մեծ յարգութեամբ ուշ կը դնէին, և այն գեղեցիկ դասերէն շատ աւելի օգուտ ու զուարճութիւն կ'իմանային քան խաղալէն : Քահանային մտերիմ իշխանը շատ վինտուելէն ետքը գտեր էր զանիկայ. բայց որպէս զի ինքն ալ լսէ անոր նոճոյն վրայ ըրած գեղեցիկ վարդապետութիւնը՝ խիստ թփոյ մը ետև ծածկուեր էր. խօսքը աւարտելէն նոքը անկից դուրս ելաւ, և զարմացած քահանայն ողջունելով ըստաւ.

— Յիրաւի միշտ քու բերնէդ անսուտ իմաստութեան վճիտ աղբիւր կը բղխի. ամեն բանէ օգուտ հանել գիտես և խելացի խօսքերով մոքերը առ Աստուած կ'ամբառնաս : Բայց հիմա ծածուկ ու առանձին ըլլալով՝ կը հարցնեմ քեզի. ի՞նչ համարմունք ունիս վարժապետին վրայ :

— Շատ զէշ :

Մօտէն ոտքի ձայն լսելով չկրցաւ. քու հանայն խօսքը առաջ տանիլ. տանտէրն էր եկողը՝ որ կը հրաւիրէր հիւրերը կառօք պտըտելու : Իսկ անոնք իրենց հրամաշտը մէկէն տուին, պատճառը բերելով երկայն ատեն կենալու միտք չունենալնին և ձկնորս Եկիստոսին ժայռին մօտ իրենց սպասելը : Տանտէրն այս բանս իրենց զբօսանաց մի միայն յարմար առիթ սեպելով՝ ուղեց անոնց հետ ծովակին վրայ նաւակով շրջագայիլ և վայրի բաղեր ու ջրային թռչուններ զարնել : Քահանայն և իշխանը հաճեցան այս բանին. և որոշեցաւ որ բոլոր

ընկերութիւնը միատեղ գայ : Տղայքը լսելով նաև ակով որսալու երթալնին շատ կ'ուրախանային : Տանտէրը զրկեց իր սենեկապանը՝ որ որսի պայուսակը, վառող և երկու հրացած բերէ, մէկը իրեն՝ միւսը հիւր իշխանին համար, որ ատենօք զօրավար եղած ըլլալով՝ քաջ որորդ ալ էր միանգամմայն. յետոյ ամենքը մէյ մէկ գաւաթ զինիով զօրացած՝ սկսան լճափը երթալ կաղամախի խիտ անտառի մը միջէն անցնելով. հոն Եկիստոսին մեծկակ նաւակը միայն կար և ինքը հոն չէր, այլ ուռենւոյ մը ճիւղերուն քաղցր հովանուոյն տակ հանգիստ պառկեր քուն կ'ըլլար, ինչպէս արդար մարդիկ Աստուածոյ խնամոցը տակ . սակայն լսելով անոնց ձայնը՝ արթնցաւ զուարթութեամբ. երեսին վրայ ամօթոյ կարմրութիւն մը նկարուեր էր, ընկերութիւնը այնպէս զինքը անհոգ ֆնոյ մէջ գտնելուն համար . ուստի փութով թողութիւն կը խնդրէր օղին տաքութիւնը պատճառ բերելով. յետոյ գնաց թիերուն մէջ իր տեղը նստաւ. բազմութիւնը մի առ մի ներս մնաւ. վարժապետը գնաց զեկը կառավարելու. աղայքն անոր զիմացը նստան, երկու որսորդը մէջ տեղը և քահանայն կռնակը Եկիստոսին զարձուցած. երկայնահեր ջրորսի շունը բազմութեան միջէն սպըրդելով զնաց նաւակին ծայրը տնկած զրօշակին տակը պառկեցաւ, որ օղին հանգարտութեանը պատճառաւ թոյլվար կախուած էր :

— Ուր կ'ուզէք երթալ, տեսարք իմ, ըստ Եկիստոսը, շապկին թեւերը ծալլելով և արեւէն սեցած ձեռացը մէջ թիակները բռնելով :

— Ամեն տեղ և ոչ մէկ տեղ մը՝ պատասխանեց տանտէր իշխանը ծիծաղելով. բադ որսալ կ'ուզենք, ծեր Եկիստէ, ուստի զմեղ զէպ ՚ի լճին մէջ տեղուանքը տար :

Ծեր նաւակավարը սկսաւ թիերուն ձայնը լսեցնել. սաստիկ ուժով կը քաշէր . որչափ խորը կը զարնէին այնչափ աւելի անտեսանելի կ'ըլլար ջրին յատակի կանանչ մասմուռը. ջուրն հետ-

դհետէ, 'ի գեղին և 'ի կապոյտ կը փոխուէք. նաւակին կողերն ալ հազիւ երկու ձեռաց լայնութեամբ ջրէն գուրա կ'երևային : Քահանային զլուխը Եկետիսին գարձելով հարցուց .

— Ի՞նչ կ'ըսես, իրաւացի չէ կարձիքս, թէ շատ զուարճալի բան է այս պիսի գեղեցիկ օդով լճին վրայ շրջագայիլը. բայց փոթորկի ատեն հետը խաղալ ըլլար :

— Այս, իրաւամբ զուրցեցիք, տէր իմ, նոյն ատենը շատ կատաղի է : Բայց ես ուրիշ որ և է քամիներէ երկիւղ չունիմ, թող փշեն ուստի կ'ուղեն, որչափ այն զէշ միրկէն որ յանկարծ ծովուն վրայ կը բռնէ :

— Ուրեմն մրրիկը վտանգաւոր կը համարիս :

— Այս, տէր. Աստուած ողորմի իմ հօրս հոգւոյն, որ քաջ և անուանի ձրկնորս էր. ինքն այս լճին վրայ կայծակէ զարնուելով մեռեր է :

— Դու ալ անշուշտ այս լճին վրայ շատ մը մրրիկներ տեսած պիտի ըլլաս :

— Խիստ քիչ անգամ, յարդոյ տէր :

— Նոյն ժամանակը ի՞նչ զգացեր ես. վախցեր ես շատ :

— Շատ վախը օգուտ չըներ, բսաւ Եկետիսոր ժապտելով. միայն ջանքս զիս ազատելն եղած է. միանգամայն մտածեր եմ թէ Աստուածոյ կամքը հարկաւ պիտի կատարուի :

— Խելացի կերպով մտածեր ես, Եկետիսո. ըսէ ինձի, ջուրը ո՞րչափ խորութիւն ունի՝ որ այսպէս սկ կ'երևայ :

— Եօթանասուն կամ ութսուն զըրկաչափ. բայց քանի առաջ երթանք՝ աւելի կը խորունկնայ :

Յանկարծ հրացան պարպելու ձայն մը ելաւ. Միլորա խելացի շունը նետուեցաւ ջրին մէջ և լողալով մեծ ձկնկուլ թըրուն մը բերաւ, զոր քահանային բարեկամ իշխանը օդին միջէն թռչելու ատեն զարկեր էր : Հրացանին ճայթմանէն զարհութեած խումբ մը բազերու թուան և ասդիս անդին զառնալով լճին մէջ տեղը փախան : Կալուածատէր իշխանը ապապը Եկետիսուն որ շուտով ա-

ռանց աղմուկ հանելու առաջ տանի զիւրնք . վարժապետին ալ ազաշեց, որ խոհեմ զեկավարութեամբ կողմնակի բազերուն մօտեցընէ նաւակը : Վարժապետը պարզ ու գեղեցիկ օգերուն միշտ զրուանաց երթալով, ուսեր էր ազէկ զեկավարել . ուստի հիմա ալ բոլոր իր ճարտարութիւնը կը թափէր տէրը գոհը ընելու համար : Մէկ քանի վայրկենի մէջ լճին մէջ տեղը հասան . բագերը նաւակէն մէկ հրացանի հեռաւորութեամբ ջրին երեսը կը լողային : Ամենքը շունչերնին բռնած պահուըտեցան նաւակին մէջ որուն վրայէն միայն հրացաններուն եղէզները ու Միլորատին սկ կնճիթը կ'երևային :

Երբ հրացաններուն ճայթմունքը կը լսուէին՝ բազերը զարհութած կարկաչելով օդին մէջ կը վերանային ու նաւակին վրայէն կ'անցնէին . այն ատեն երկու կրկին եղէզն ունեցող հրացանք ալ դարձեալ կը ճայթէին . և Միլորատին համար մեծ վաստակ կը բացուէր : Հինգ բագ սփուռեր էին ջրին վրայ, ոմանք մեռած՝ ոմանք ալ մահուան մօտալութք, զորոնք շունը լողալով մի առմի բերաւ :

Տղոց խնտումը կարգէ դուրս էր. վարժապետն ալ կը ծիծաղէր և հետերնին կատակ ընելով՝ արու բազին ազիէն ծուռ փետուրները կը քաշէր ու տղոց զիսարկները կը զարդարէր : Բարեկամ՝ իշխանը կը գովէր Եկետիսուր, որ այնպէս հանդարաթիք քաշելով տարեր էրնաւակը . միւս իշխանն ալ գովիսստ կու տար վարժապետին՝ իրեն սպէկ զեկավարելուն համար : Իշխանները որսերնուն վրայ ուրախացած հրացանները նորէն լեցընելէն ետքը մտադրութեամբ ամեն կողմէ կը նայէին, խորհուրդ ընելով թէ ի՞նչ ընեն . լճին մէջ տեղէրը մնան, թէ նորէն նոյն տեղը գտանան և կամ անդիի կողմը անցնին :

— Յամաքը ո՞րշափ հեռի է մեզմէ, հարցուց բարեկամ իշխանը Եկետիսունին :

— Հինգ քառորդ ժամ, բսաւ Եկետիսու, նայելով զրոկին վրայ՝ որ կա-

խուած չեր առաջուան պէս, այլ Միլոր-  
տին դլայն վրայ կը ծածանէր. ջուրն  
ալ կամաց կամաց կը ծփար:

Եկիտիոսը մերթ դէպ 'ի լիճ՝ մերթ  
երկինք կը դարձնէր աչքերը. Ան ատեն  
հարցուց տանտէր իշխանը.

— Ի՞նչ կը նայիս այդպէս, Եկիտիէ:  
— Փոթորկէ կը վախնամ, ըսաւ, կա-  
շիէ գոտին մէջքին վրայ պնդելով:

— Փոթորկէ. խելքդ վերացերէ, ծե-  
րուկ. ուստի պիտի զայ փոթորիկը, երբ  
երկինքը ամպոյ հետք մը բնաւ չերևար:

— Անիկայ խօսք մը չէ. ամպը կրնայ  
լեռներուն ետեր թաքչիլ, այս քամին  
ինծի կասկածաւոր կ'երեւայ. եթէ,  
տեալք իմ, խորհրդոյս հետեկը, որչափ  
կարելի է՝ աճապարենք ցցուած ժայռին  
հասնելու:

— Այնպէս ըրէ, ըսաւ քահանայն,  
ինչպէս որ փորձը քեզի կը ցուցընէ:

Երբ այս բանիս իշխաններն ալ հա-  
ւանեցան, Եկիտիոս նաւակը ետ դար-  
ձուց. և այնպէս ուժ կու տար թիա-  
կին որ կարծես թէ վիշապ ձկան կո-  
կորդէն կ'ուզէր աղատիլ: Անխոնջ ա-  
րիութեամբ բաւական ճամբայ կտրեց.  
Հաղիւ կէս ժամ մնացեր էր ցամաքին.  
քրտինքը կաթիլ կաթիլ սպիտակ մա-  
զերուն վրայ կը փայլէին: Վարժապետը  
տեսնալով որ դրօշը չիծածանիր, ըսաւ  
անոր ծիծաղելով.

— Դու, Եկիտիոս, օդին չարագու-  
շակ մարգարէ ես. այդ սրտագոլովդ  
որսորդները իրենց որաէն ու զմեզ ալ  
մեր ուրախութենէն զրկեցիր. խնդրեմ  
քիչ մը կամաց, ահա շունչդ կը հատնի:

— Ինծի համար չեմ վախնար, ար-  
դէն մահուան դուռն հասած ծեր մը  
եմ. այլ ընկերութիւնը մեծ վտանգէ  
խալքան կը ջանամ, և շատ բարեբախտ  
պէտք է սեպել զմեզ՝ եթէ անվնաս ա-  
ռանց փոթորկէ բռնուելու ցամաք ել-  
լանք:

Վարժապետն այս խօսքերուս վրայ  
ծիծաղելու ժամանակ, ահա ծծմբա-  
զոյն ամպ մը ժայռին վրայէն յանկարծ  
գուրս երկնցաւ, որ մտաց երագութեամբ  
կ'ածէր և սպառնալից կը նայէր լճին

վրայ: Այս տեսնալով ամենքը իրաւոնք  
կու տային Եկիտիոսին՝ որ այնպէս կը  
փութար: Իսկ վարժապետը սարսափած  
աչքերը անընդհատ ամային վրայ կը  
տրնկէր. երեսին գոյնը դեղներ էր և  
ձեռքն ալ զեկին վրայ կը դողար: յետոյ  
կակաղելով հարցուց ձկնորսին.

— Սիրելի Եկիտիոս, ցամաք կը հաս-  
նինք:

— Կը հասնինք, ըսաւ, եթէ քիչ մը  
ատեն դեռ ամայլ հանգարտ կենայ. իսկ  
եթէ տեղէն շարժի, ան ատեն կ'առնու  
զմեզ փոթորիկը և ինչուան լճին միւս  
եզերքը կը ձգէ:

— Աստուծոյ օրհնեալ կամբն ըլլայ,  
ըսաւ քահանայն, խրախուսելով Եկի-  
տիոսը՝ որ կրցածին չափ աճապարէ:

Եկիտիոսը նայեցաւ մէյ մը ամպին  
և զլուխը շարժելով, Անկարելի է, ը-  
սաւ: Ծծմբագոյն ամպը կը յառաջէր  
դէպ 'ի լիճ. ցամաքին կողմէն սկսաւ ջու-  
րը յուզիլ. ջրային թռչունք կը կարկա-  
չէին. Միլորան ալ իր բնական զգաց-  
մամբը փոթորիկին գալը իմանալով, պո-  
չըներս քաշեց: Տղայքը սարսափած վար-  
ժապետին կը զիմէին. բայց անիկայ կա-  
րող չէր զիրենք միսիժարելու, ահուզո-  
ղով պաշարուած ըլլալով. ու խելքը  
միտքը ամպերուն վրայ էր՝ որ անհնարին  
արագութեամբ մահ սպառնալով իրենց  
վրայ կը զիմէին:

Կը շարունակուի:

### ՔԱՂՔԷՆ ԴՈՒՐՍ ՊՏՈՅՑ ՄԸ

ՍԿԻՊԻՈՆ ՄՕԲՈՒԱԼԻ ՏՆԿԱԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ Ի ՏՈՒՐԵ  
ՄԵՐՁ Ի ՎԵՆԵՏԻԿ

Այնան առաւօտ մըն էր՝ որ ընկերա-  
բար ելայ դաշտորէքը պտոյս մը ընե-  
լու: Գրդիոս սնկաբանական մեծ տուն  
մը այց ելլելն էր գլխաւորապէս, ուր՝  
մասնաւորաբար ընկերս յանձնարա-  
բական գործ մ'ունէր կատարելու:

Հանգիստ շոգեկառաց մէջ նատած  
մեզի ճանապարհորդակից եղողներու  
հետ աստիս անդին փոփոխ խօսակցու-